Ի զուր չէ որ հայ ժամանակակից պատմագիրը արաբական քաղաքականութիւնը բնորոշելու համար յիշում է Ոլիմպիանի առակը «վասն առիւծուն եւ զուարակացն» (Թ. Արծրունի, էջ 137), ուր առիւծը, ինչպէս յայտնի է, բաժանում է միմեանցից երեք զուարակներին, որպէսզի յետոյ մէկ մէկ լափել կարողանայ դիւրութեամբ: Ամէն պարագային փաստ է, որ Սպերը կայսեր շնորհիւ, իսկ Տարօնն ու Վասպուրական խալիֆի Ջանքերով մեկուսացան Հայաստանից:

Ամորիայի արշաւանքը գրգռել էր երկու կողմերն էլ եւ պատերազմը նորէն բռնկելու էր եթէ կայսրը եւ խալիֆը չմեռնէին դրեթէ միաժամանակ 842 թուին:

Մուտասիմի որդին Վաղիկը (842–847) թոյլ քան խաղաղասէր էր: Հազիւ կարողացաւ յարդարել պատերազմից մնացած հաշիւները:

Արաբական մատենագիրների ասելով, Վաղիկի օրով խլրտումները նորէն ծայր տուին Հայաստանում, եւ գլուխ բարձրացրին հայ իշխանները եւ մարաբ բռնաւորները:

Մասէն յայտնի չէ յուզումների էութիւնը: Գիտենք որ խաղաղութիւնը վերականգնելու եկան ոստիկանական պաշտօնով Շայրանի՝ Խալիդ եւ յետոյ Մուհամմեդ, հայր եւ որդի: Հայրը մեռաւ, Ասողիկի տեղեկութեամբ, Ջաւախքի Խոզարիր գիւղում: Իսկ որդու մասին Կաղանկատուացին պատմում է որ ասպատակեց Սիւնեաց աշխարհը, աւերեց Բաղք եւ Աղահէջ գաւառները: Ամորիայի առումն յիշելուց յետոյ Վարդանը յիշում է որ Աբլհերթ ոմն, մեզ յայտնի Ջահապի տանից, գնաց չորս հազար մարդով Սիւնեաց վրայ, բայց նրա դէմ երաւ Բարգէն Սիւնի եւ եւ ջարդեց նրան ունենալով իր ձեռքի տակ ընդամէնը երկու հարիւր հոգի:

Արդեօք կապ կա՞յ այս երկու յարձակումների մէջ:

Իսկական խռովութիւնները սկսան Վաղիկի յաջորդի գահակալութեամբ եւ տեւեցին դրեթէ մի տասնեակ տարի սկսած 849 թուից:

V

Վաղիկից յետոյ գահը բարձրացաւ նրա եղբայրը Մուտավաքիլ, որի անունը Ջաֆար էր, ուստի եւ մեր հեղինակների մօտ յայտնի է Ջաֆր անունով (847–861): Մեծ յաւակնութիւնների տէր էր, ուզում էր վերականգնել խալիֆների զօրութիւնը, ձգտում էր նախկին մեծութեան եւ փառքի, երբ փառքն արդէն խուսափում էր:

Հայաստանի անցքերը արդեօ՞ք արդիւնք էին նրա ծրագրային քաղաքականութեան եւ նպատակն էր վերահաստատել պետական հեղինակութիւնը ըմբոստ եւ անհնազանդ իշխանների աչքում, թէ՞ խռովութեանց մերձաւոր առիթը հէնց իրենք իշխաններն էին իրենց անջատական ձգտումներով:

Մեր պատմագիրները միշտ խուսափում են ապստամբական շարժումները անուանել իրենց անունով եւ ուզում են դունաւորել իրենց սեփական հասկացողութեան եւ աշխարհայեցողութեան համեմատ: Սակայն, երբեմնակի ակամայից խոստովանում են ճշմարտութիւնը:

Թովմա Արծրունին հաւատացնում է որ Մուտավաքիլը սիրում էր խռովութիւն եւ արիւնհեղութիւն. եւ հանապազ որոնում էր թէ որ կողմը եւ կամ ում վրայ թափէ «զդառնութիւն մահարեր թունից իւրոց»: Վճռում է յարձակուել հայերի վրայ: Նրա կողմից եկած ոստիկանը որպէս թէ դաղտնի պատուէր ունէր «պատիր խարէութեամբ բառնալ զնոսա (այսինքն զիշխանս) յիւրաքանչիւր տէրութենէ»:

Միւս կողմից՝ նոյն պատմագիրը չի թաղցընում, որ խալիֆը ինքն էր մեղադրում հայերին, որ հակառակ բոլոր խնամքի եւ հոգացողութեան միշտ թշնամաբար են վերաբերում արաբական իշխանութեան եւ նրա պաշտօնէութեան «զօրս զումարէիք, յանդիմանում է ամիրապետը, այրուձի կազմէիք, մարտս եւ պատերազմունս զրգռէիք, ճակատ դնէիք եւ զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք: Եւ զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք եւ աշխարհի աւերիչի դառնէիք եւ հարկացն եղելով խափանիչք լինէիք» (Թովմա, էջ 174):

Որ այս խօսքերը սոսկ զրպարտութիւն չեն, երեւում է Թոմայի պատմուածից, եթէ մի կողմ նետենք նրա պատճառաբանութիւնը եւ հետեւենք իրադարձութեան: